

# ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ©

*Փողոցի հավատքից մինչև պետական կառույցի առաջխաղացումը*



301 թվականին Հայաստանը, որպես անկախ պետություն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական պաշտոնական կրոն: Պետության միապետը՝ Տրդատ Երրորդը, Սուրբ Գրիգորի մկրտությամբ ընդունեց քրիստոնեությունը: Մինչ այդ տեղի ունեցան մի շարք դաժան իրադարձություններ: Այնուամենայնիվ, հեթանոսական բոլոր դրսևորումներն արագորեն և վերջնականապես արմատախիլ արվեցին: Դա մեծ ձեռքբերում էր, որի արդյունքում հիմք դրվեց ընդգրկուն և առաջավոր արժեքների և սովորույթների: Ցավոք, Հայաստանի արևմտյան հարևան Հռոմեական Կայսրությունը դեռևս տառապում էր քրիստոնյաների դեմ ուղղված բազմաթիվ հալածանքներով, չնայած որ Հայաստանն արդեն ճանաչել էր այդ նոր հավատքը: Իսկապես, ռեֆորմատոր համարվող Դիոկլետեն կայսեր իշխանության ժամանակահատվածում սկսած հալածանքները Հռոմեական Կայսրության պատմության մեջ ամենասոսկալին էին, երբ սրբերը նահատակվում էին:



Տապանը գտել է իր հանգրվանը: Նոյն իջնում է Սուրբ սարից և խաղողի այգի է տնկում Արարատյան դաշտավայրում: Այս պատկերը Այվազովսկու «Նոյն Իջնում է Արարատից» կտավի հատվածից է (19-րդ դար):

Կոնստանտին Մեծի իշխանության գալը զգալիորեն փոխեց իրավիճակը: 313 թվականին, գահակալվելով Միլանում և իշխանության գալով կիսված կայսրության արևմտյան հատվածում, այն լիովին կրոնական հանդուրժողականություն ցուցաբերեց քրիստոնյաների նկատմամբ: Հաստատուն կերպով հաղթահարելով հանդիմանողներն, Կոնստանտինը 324 թվականին միացրեց Հռոմեական Կայսրության արևմտյան և արևելյան հատվածները: Մեկ տարի անց Անատոլիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Նիքեայում նրա նախագահությամբ անցկացվեց եկեղեցու առաջին Էկումենիկ ժողովը: Կարճ ժամանակ անց Բյուզանդիայի հունական քաղաքը ընդլայնվեց և 330 թվականին հայտարարվեց որպես Հռոմեական Կայսրությանը մայրաքաղաք: Այն հայտնի է նաև որպես Կոստանդնուպոլիս անունով: Հռոմ քաղաքը ևս մնաց որպես կարևոր տարածաշրջանային մայրաքաղաք: 337 թվականին կայսեր մահվան

Ժամանակ քրիստոնեությունն արդեն իր հաստատուն տեղն ուներ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ընդգրկուն աշխարհագրական դիրքը, այն դեռևս պետք է մրցակցեր նախկին հեթանոսական աստվածների և սովորույթների հետ:

380 թվականին Սալոնիկի թագավորությունը, որը հռչակվել էր Թեոդոսիոս Առաջին կայսեր կողմից, քրիստոնեությունը հաստատեց՝ որպես Հռոմեական աշխարհի պետական պաշտոնական կրոն: Այն արդյունավետ կերպով արգելեց հռոմեական բազմաստվածությունը: Արդյունքում, այն հասավ Հայաստանի՝ շուրջ մեկ-տասնամյակ առաջ հասած մակարդակին: Թեոդոսիոս Առաջինը վերջին կայսրն էր, որի իշխանությունը տարածվում է կայսրության արևմտյան և արևելյան հատվածների վրա:



[Հայաստանի քարտեզագրումը](#)

Քաղաքակրթության առաջավոր հատվածը վստահորեն առաջ էր շարժվում, և այն դառնում էր համաշխարհային: Դեռ ավելին, խաչը դառնում էր որպես միջնակության խորհրդանիշ:



**Անիի գինանշանը, Մ.թ. 1000 դար**


Վատիկանը և Եղեկեցական համաշխարհային խորհուրդը մեծ կարևորությունը էին տալիս Հայաստանին՝ Քրիստոնեությունն առաջինն ընդունելու համար: 2001թ. Հովհաննես Պողոսը այցելեց Հայաստան Քրիստոնեության 1700 ամյակի ընդունման կապակցությամբ և հայտարարեց՝ «Աստված օրհնի Հայաստանը»:

Նայելով ժամանակի խորքը, խելամիտ կլինեք ընդգծել, որ առաջին դարի առաքյալներ Բարդուղիմեոսը և Թադեոսը հիմք դրեցին Հայաստանում Քրիստոնեության հաստատման:



**Անիի պարիսպները**

Ավելի ուշ ժամանակաշրջանի սրբերը, այդ թվում երեսունհինգ ընտրյալ կույսերը որոնց առաջնորդները Հռոմում էին, սկսեցին ի հայտ գալ 280-ականների վերջերին: Երկրի միջնադարյան մայրաքաղաք Անին անվանվում էր որպես 1001 եկեղեցիների քաղաք: Բայց, բիբլիական Սուրբ Բարձրավանդակը հանդիսանում էր՝ իբրև սրբերի նահատակվելու հանգրվան: Նրանց՝ բազմամյա թշնամիներից փրկելը դիտարկվում էր՝ իբրև Սուրբ տերություն առաքելություն: Իսկապես, անհրաժեշտ է մշտապես կասեցնել եվրոպական քաղաքակրթության դեմ ուղղված վտանգները:



Սկզբում, իհարկե, հռոմեացիներն էին կրթել Տրդատ Երրորդ արքային, որը թշնամաբար էր տրամադրված քրիստոնեության հանդեպ: Հետևաբար, Արարատյան դաշտավայրի խոր վիարպում բանտարկված Սուրբ Գրիգորը (257-331թթ.) պատժվում էր իր ջանքերի և նոր կրոնը քարոզելու համար: Այնուամենայնիվ, 13 տարի անց և որոշակի տառապանքներից հետո, Տրդատ թագավորը հետ վերցրեց իր հրամանը և թույլատրեց Սուրբ Գրիգոր Լուսավորչին դուրս գալ վիրապից: Սա քրիստոնեության առաջին քայլն է ողջ աշխարհում՝ դեպի բազմազան պետական կառույցներ հաստատուն կերպով առաջ շարժվելուն:



*Վատիկանում Սուրբ Գրիգոր Լուսավորչի 26 տոննայանոց հայտնի արծանը տեղադրված է Սուրբ Պետրոսի տաճարի հյուսիսային մասում՝ բավականին մոտ գտնվելով հիմնական մուտքին:*



*2001 թվականին մի շարք եկեղեցիների ղեկավարներ հավաքվեցին Հայաստանում որպեսզի նշեն 301 թվականին Հայաստանի կողմից քրիստոնեության ընդունումը: Մի շարք երկրներ այս կապակցությամբ թողարկեցին նամականիշներ: Վերը ներկայացված նամականիշների շարքը Վատիկանից է նվիրված 1700 ամյակին, որոնց միջոցով ընդգծվում են միջին դարերի վաղ շրջանի լուսավորչական ձեռագրերի համբավը:*

2001 թվականին Հռոմի Պապ Հովհաննես Պողոսը իջավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի վիրապը: 2015 թվականին Ցեղասպանության հարյուրամյակի հիշատակի միջոցառումների շրջանակներում Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում տեղի ունեցավ ողջ աշխարհով ուղիղ հեռարձակվող առանձնահատուկ պապական պատարագ: Մեկ տարի անց, Պապ Ֆրանցիսը հետևողական լինելով այդ հոգևոր իրադարձություններին այցելեց Հայաստան և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ նույն վայրում համատեղ մատուցեց պատարագ: Ինչպես ներկայացված է, այս ուխտատեղում, որտեղ 642 թվականի կառուցվել է առաջին եկեղեցին, այժմ գտնվում է Հայաստանի Խոր Վիրապ եկեղեցական համալիրը, որը հիանալիորեն նայում է դեպի Արարատ լեռը, որպես կանխատեսման հրամանագիր:

[Իրավունքներ և արժեքներ](#)  
[Եվրոպայի սահմանագծերը](#)  
[Մեծ Եվրոպա](#)  
[Եվրոպական քաղաքակրթություն - մեծ ճամփորդություն](#)



**Թ.Ս. Զահվե, Արարատ  
 Ժառանգություն,  
 Լոնդոն, հուլիս 2018թ.**